Բարձրագույն բժշկական կադրերի պատրաստման կարեւորագույն փուլերը: Նվաճումներ եւ հեռանկարներ

Մ.Հերացու անվան ԵրՊԲՀ-ի ռեկտոր, ակադեմիկոս Վ. Պ. Հակոբյան

375025 Երևան, Կորյունի 2

Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հիմնադրման 75 և բարձրագույն բժշկական կադրերի պատրաստման 85-ամյա հոբելյանը ոչ միայն համազգային տոնական իրադարձություն է, այլ նաև՝ բժշկագիտության 85 տարիների ձեռքբերումների յուրօրինակ ամփոփում:

Յոթ և կես տասնամյակ է արդեն, որ, լինելով հայոց միջնադարյան կրթամշակութային փառապանծ կենտրոնների ավանդների շարունակողն ու զարգացնողը, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը պատվով ու պատասխանատվությամբ է կատարում իր վսեմ առաքելությունը բժշկական կադրերի պատրաստման, բժշկագիտության և առողջապահության զարգացման կարևոր գործում:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ բժշկագիտության արմատները հասնում են դարերի խորքը: Հայտնի են առանձին փաստեր, երբ դեռևս անտիկ աշխարհի համալսարաններում ուսանում էին հայազգի երիտասարդներ: Անտիկ շրջանի հայ և արաբ պատմաբանները, աշխարհագրագետները, դեղաբանները բազմիցս անդրադարձել են պատմական Հայաստանում կիրառվող բուժման մեթոդներին, ամոքիչ և բուժիչ դեղաբույսերին: Հինգերորդ դարում, Մեսրոպ Մաշտոցի կողմից հայկական տառերը ստեղծելուց հետո, հայ բժշկագիտության միտքը զարգացման նոր թափ ստացավ: Հանդես եկան գիտության ամենատարբեր բնագավառներին նվիրված գիտական, այդ թվում նաև՝ բժշկագիտական և դեղաբանական ինքնատիպ բարձրարժեք ուսումնասիրություններ:

Հայաստանում բժշկագիտության զարգացման համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծվեցին 9-րդ դարում՝ արաբական լուծը թոթափելուց և հայկական պետականությունը վերականգնելուց հետո:

Մի շարք վայրերում (մայրաքաղաք Անիում, Հաղպատում, Սանահինում) բացվեցին հիվանդանոցներ, դեղատներ և բժշկական դպրոցներ: Ստեղծվեցին նաև բարձրագույն դպրոցներ՝ ակադեմիաներ, որտեղ փիլիսոփայության և բնական գիտությունների հետ մեկտեղ ուսումնասիրվում և դասավանդվում էր նաև բժշկությունը: Որպես բժշկական արվեստի առաջամարտիկներ՝ այն ժամանակ հանդես եկան Բագրատունիների տոհմի ներկայացուցիչները:

Գագիկ I-ի կառավարման տարիներին (990-1020թթ.) ստեղծվում է «Գագիկի բժշկարան» աշխատությունը, որտեղ հայկական բժշկական ձեռքբերումներն ընդհանրացնելու փորձ է արվում:

Այդ ժամանակներում մեծ գործունեություն էր ծավալում Գրիգոր Մագիստրոսը:

«Գագիկի բժշկարանի» հետագա բախտը կապված է Կիլիկյան Հայաստանի և նրա բժշկական դպրոցի հետ, որի պարագլուխը միջնադարի հայկական բժշկության ամենապայծառ և հանճարեղ ներկայացուցիչ՝ Մխիթար Հերացին էր («Մեծն Մխիթարը»): Աներկբայորեն Հերացու անվան հետ է կապված միջնադարյան Հայաստանում գիտական բժշկության սկզբնավորումը: Նրա ինքնատիպ երկի՝ «Ջերմաց մխիթարություն» բժշկարանի գիտական նշանակությունը դուրս է գալիս ազգային սահմաններից և դառնում միջնադարյան բժշկագիտության խոշորագույն նվաճումներից մեկը:

Հետագայում, ցավոք, հայ պետականության անկման հետ մեկտեղ, փակվեցին նաև բարձրագույն դպրոցները և համալսարանները, որոնց թվում նաև՝ բժշկական: Դարեր շարունակ ընդհատվեց հազարամյա պատմություն ունեցող բժշկական դպրոցների կյանքը...

Կրթական դպրոցը Հայաստանում վերստին աշխուժացավ 1828թ., երբ Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին: Այդ ժամանակ հայկական կրթական համակարգի զարգացման գործում կարևոր դեր ունեցան Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Էջմիածնի Գևորգյան և Մոսկվայի Լազարյան ճեմարանները:

Մեր կրթության և գիտության լուսավոր գործիչներին միշտ էլ հուզել և մտահոգել են ոչ միայն ազգային կրթության խնդիրները, այլ նաև՝ ժողովրդի առողջության պահպանումը: Սակայն այդ բոլոր ձգտումներն ու երազանքները անիրատեսելի էին, քանի դեռ չկար հայկական պետականություն, չկային համապատասխան միջոցներ:

Հայաստանի առաջին Հանրապետության ղեկավարությունը առաջնահերթ ուշադրության արժանացրեց երկրի հոգևոր կյանքի զարգացումը: Ահա ինչ է գրում Նիկոլ Աղբալյանը. «Չնայած մեր երկիրն ավերված է, ժողովուրդն աղքատության մեջ է, մենք պետք հիմնենք բարձր կրթարան: Այն, ինչ որ մենք ունենք այսօր, ձեռք է բերված սերունդների արյունով: Հարգենք նրանց հիշատակը: Մենք վերաշինում ենք մեր

տունը և հիմնում կրթության տաճարներ, առանց խորհելու, թե ինչ են մտածում այդ մասին մեր թշնամիները, որոնք միշտ քանդել են մեր շինածը: Դեռևս մեզ համար բոլոր վտանգները անցած չեն, դեռ մեր ձեռքում սուր պիտի ունենանք, բայց արդեն ժամանակն է, որ մյուս ձեռքում գրիչ բռնենք»:

Եվ այսպես, Հայաստանի առաջին հանրապետության նախարարների խորհուրդը 1919թ. մայիսի 16-ին ընդունում է Հայաստանում համալսարան բացելու մասին օրենքը. հիմնել համալսարան հետևյալ չորս բաժիններով. 1. պատմալեզվաբանական, 2. տնտեսահրավաբանական, 3. բժշկական, 4. ֆիզիկամաթեմատիկական: Համաձայն այդ որոշման՝ նախապատվությունը տրված էր պատմալեզվաբանական բաժնին: Մնացած բաժինների բացման ժամանակը և հերթականությունը սահմանելու էր Հանրապետության նախարարների խորհուրդը: Դրանից հետո հետևողական աշխատանքներ տարվեցին՝ բժշկական ֆակուլտետի բացման ուղղությամբ:

1920թ. պետական համալսարանը զեկույց է ներկայացնում հանրային կրթության նախարարին՝ բժշկական ֆակուլտետ բացելու անհրաժեշտության մասին: Այսպիսով, հետևողական ախատանքների արդյունքում, ՀՀ Կառավարությունը 1920թ. հոկտեմբերին ընդունում է՝ համալսարանում բժշկական ֆակուլտետի բացման մասին օրենքը:

Աշխատանքի հրավիրվեցին Գ. Աբելյանը, Ե. Տեր-Հովսեփյանը, Հ.Հակոբյանը և ուրիշներ: 1922թ. բժշկական ֆակուլտետի դեկան է նշանակվում Սպանդարատ Կամսարականը: Բժշկական ֆակուլտետի աշխատանքները կապված էին մեծ դժվարությունների հետ. դասախոսությունների և գործնական պարապունքների համար չկային լսարաններ, լաբորատորիաներ, դիահերձարան, կլինիկական հիվանդանոցներ, սարքավորումներ, դասագրքեր: 1927թ. կառուցվեց անատոմիական մասնաշենքի մի մասը: Միակ վիրաբուժական բաժանմունքը հանրապետական առաջին հիվանդանոցն էր, որն ուներ ընդամենը 2 վիրաբույժ և 28 մահճակալ: Ֆակուլտետի ստեղծման և գործունեության մեջ մեծ ներդրում ունեցան Վահան Արծրունին, Հակոբ Հովհաննիսյանը, Սպանդարատ Կամսարականը, Գրիգոր Աբելյանը, Լևոն Հովհաննիսյանը, Համբարձում Քեչեկը, Արշակ Հակոբյանը, Աբգար Իսահակյանը, Գրիգոր Մեղնիկյանը, Փայլակ Հակոբյանը, Եղիշե Շեկ-Հովսեփյանը և այլոք:

Ֆակուլտետի հիմնադրումով իրականացավ հայ ժողովրդի՝ սեփական հողում բժշկագիտության դարբնոց ունենալու դարավոր երազանքը: Հայազգի երիտասարդներն այլևս հարկ չէին ունենա մեկնելու Ռուսաստան, Եվրոպա կամ Ամերիկա: Իր առաջին դասախոսության ժամանակ այդ առիթով ահա ինչ է ասել Վահան Արծրունին, որը կրթություն էր ստացել Ֆրանսիայում. «Երևանում ունենք բժշկական ֆակուլտետ, որ գիտությունն ավանդվելու է մայրենի լեզվով, ես անչափ հպարտ եմ և ուրախ, որ ինձ բախտ վիճակվեց կարդալու առաջին դասախոսությունը»:

1927թ. ֆակուլտետը տվեց իր առաջին շրջանավարտները, թվով՝ 32 բժիշկ: Եթե ֆակուլտետի բացման ժամանակ դասախոսների թիվն ընդամենը վեցն էր, ապա 1930թ., անջատվելով համալսարանից, ֆակուլտետն արդեն ուներ 30 ամբիոն և 102 դասախոս: 1930թ.՝ ինքնուրույն ինստիտուտի հիմնադրման տարում, առաջին կուրս ընդունվեց 163 ուսանող:

Պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և ուսանողությունը միասնական ուժերով հաղթահարեցին ուսումնական գործընթացի հետ կապված բազմաթիվ դժվարություններ:

Չնայած իր համեստ կարողություններին՝ ֆակուլտետն իր գործունեության տարիների ընթացքում նշանակալից դեր խաղաց բժշկական կադրերի պատրաստման և հանրապետության առողջապահության համակարգի կայացման և զարգացման գործում: Բժշկական ֆակուլտետն իր գոյության ընթացքում տվեց 136 շրջանավարտ, որն այդ տարիների համար մեծ առաջընթաց կարելի է համարել:

ԽՍՀՄ կառավարության որոշմամբ 1930թ. պետական համալսարանների համապատասխան ֆակուլտետների հիման վրա ստեղծվեցին ինքնուրույն ինստիտուտներ, որոնց թվում և՝ Երևանի պետական բժշկական ինստիտուտը, որը դարձավ բժշկական կադրերի պատրաստման իսկական դարբնոց:

Բժշկական ինստիտուտը (1995թ.՝ համալսարանը) իր գոյության 75 տարիների ընթացքում ոչ միայն Հայաստանն ապահովեց անհրաժեշտ թվով բարձրագույն բժշկական և դեղագիտական կադրերով, այլև կադրեր պատրաստեց նախկին ԽՍՀՄ և արտասահմանյան երկրների համար:

Բժշկական ինստիտուտի առաջին ռեկտորը Հ.Գ.Հովհաննիսյանն էր, որը մինչ այդ (1922-1930թթ.) պետական համալսարանի ռեկտորն էր և ուներ ղեկավարելու մեծ փորձ և հմտություն: Հայաստանի առժողկոմատի օգնությամբ, իրեն հատուկ եռանդով, ռեկտոր Հակոբ Հովհաննիսյանը ձեռնամուխ եղավ ինստիտուտի ուսումնական, գիտական և կլինիկական աշխատանքների խթանմանը, տեխնիկական միջոցների հայթայթմանը և նոր ամբիոնների հիմնադրմանը:

1931թ. բացվեց սանիտարահիգենիկ ֆակուլտետը, որի շրջանավարտները մեծ դեր ունեցան հանրապետությունում համաճարակների դեմ արդյունավետ պայքարում: 1939թ. անհրաժեշտություն առաջացավ բացելու բուժական ֆակուլտետի ռուսական բաժինը: 1932թ. ամբողջովին ավարտվեց անատոմիական մասնաշենքի կառուցումը, իսկ 1939թ. կառուցվեց նաև կենտրոնական մասնաշենքի մի մասը, որտեղ տեղակայվեցին ինստիտուտի տեսական ամբիոնները և վարչակազմը:

Ինստիտուտի պատմության մեջ առանձնապես հիշարժան է 1936 թվականը, երբ, նկատի առնելով բուհի աճը և կադրային ներուժը, վերջինիս ատենախոսությունների պաշտպանության և գիտությունների թեկնածուի, այնուհետև (1944թ.) նաև դոկտորի գի-

տական աստիճաններ շնորհելու իրավունք տրվեց:

Բժշկական ինստիտուտի ստեղծման, զարգացման ակնառու հաջողությունների հետ մեկտեղ, ինստիտուտը ծանր կորուստներ կրեց՝ կապված անհատի պաշտանմունքի հետ: 1936-1938թթ. ինստիտուտի մի խումբ անվանի դասախոսներ և հմուտ ղեկավարներ դարձան ստալինյան ոճրագործ քաղաքականության զոհեր:

Ինստիտուտը մեծ փորձության ենթարկվեց նաև Հայրենական մեծ պատերազմի (1941-1945թթ.) տարիներին: Արժանիորեն պետք է նշել, որ պատերազմը լուրջ վնասներ չհասցրեց ինստիտուտի աշխատանքներին, և նա պատվով դուրս եկավ այդ դժվարին փորձությունից: 55 անվանի դասախոսներ (Շ. Մ. Մաթևոսյան, Վ.Հ. Սարուխանյան, Ա.Ջ. Ճաղարյան, Ի. Գևորգյան, Ա.Հ. Բեգլարյան և շատ ուրիշներ) մեկնեցին ռազմաճակատ և գործող բանակում պատվով կատարեցին Հայրենիքի հանդեպ իրենց սրբազան պարտքը: Ինստիտուտը մեծ օգնություն ցուցաբերեց նաև Հայաստանի սահմաններում գործող բազմաթիվ էվակուացիոն հոսպիտալներին՝ նրանց համար ապահովելով կլինիկական ամբիոնների բարձրորակ դասախոսներով, բուժման և տեխնիկական միջոցներով: Պատերազմի տարիներին շարունակվում էին նաև գիտական հետազոտությունները, որոնց զգալի մասն ուներ պաշտպանական նշանակություն: Պատերազմի առաջին տարիներին, երբ վտանգված էր Հյուսիսային Կովկասի գոյությունը, կառավարության որոշմամբ Երևան փոխադրվեցին Կրասնոդարի և Օրջոնիկիձեի բժշկական ինստիտուտները՝ իրենց ուսանողներով և դասախոսական կազմով: Ինստիտուտի ղեկավարությունը և ողջ կոլեկտիվը ամեն կերպ օժանդակեցին տեղափոխված ինստիտուտներին՝ վերջիններիս հատկացնելով իրենց կլինիկական բազաները, լաբորատորիաները և լսարանները: Արվեց ամեն ինչ, որպեսզի նրանց ուսումնական աշխատանքները չձախողվեն:

Այսօր, երբ լրանում է Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 60ամյակը, կարելի է հպարտությամբ նշել, որ ինստիտուտի կոլեկտիվը պատվով դուրս եկավ այդ մեծ փորձությունից և իր արժանի ներդրումն ունեցավ այդ պանծալի հաղթանակում:

Բժշկական համալսարանը միջազգային ճանաչում ստացած կրթօջախ լինելուց բացի, շարունակում է մնալ բժշկական մտքի զարգացման կենտրոն: Սկսած 1935թ. ինստիտուտում պարբերաբար հրավիրվել են գիտական նստաշրջաններ:

Ուսանողների մեջ գիտահետազոտական աշխատանքների հմտություններ զարգացնելու և ապագա գիտամանկավարժական կադրեր պատրաստելու նախապայմաններ ստեղծելու նպատակով 1947թ. հիմնադրվեց ուսանողական գիտական ընկերությունը, որը հետագայում կոչվեց հայ մեծանուն բժիշկ և գիտնական Լ.Ա. Օրբելու անունով: Համալսարանի ՈՒԳԸ-ն անցել է կատարելագործման ու զարգացման երկար ու բեղմնավոր ուղի՝ ամբիոններին կից գործող առանձին խմբակներից վերածվելով գիտական լուրջ կազմակերպության: Համալսարանի ներկա ամբիոնների վարիչներից, պրոֆեսորներից ու դոցենտներից շատերն իրենց սկզբնական գիտական մկրտությունն ստացել են ՈՒԳԸ խմբակներում:

Ցանկացած ուսումնական հաստատության կարևոր ու ամենաանհրաժեշտ կառուցվածքային միավորը գրադարանն է: Բժշկական գիտական գրադարանը հիմնվել է 1930թ.: Բավականաչափ հարուստ է նրա գրքային ֆոնդը (ավելի քան 500.000 միավոր), որն ամեն տարի համալրվում է նոր գրականությամբ: 75 տարիների ընթացքում համալսարանում պաշտպանվել և գրադարանում առկա է 1533 ատենախոսություն, որից 231-ը՝ դոկտորական: Բոլորովին վերջերս ժամանակակից տեխնիկայով հագեցած նոր ընթերցասրահի բացումով ավելի բարելավվեցին գրադարանի աշխատանքային պայմանները: Առաջիկայում նախատեսվում է գրադարանի համակարգչային և տեղեկատվական հնարավորությունների ընդլայնում, այլ երկրների գրադարանների կապերի արդյունավետ օգտագործում, միջազգային տեղեկատվության փոխանակման և թղթակցության պարբերականության ապահովում՝ հետագայում «Էլեկտրոնային գրադարան» ստեղծելու հեռանկարով:

Բժշկական ինստիտուտի կյանքում ուշադրության արժանի և անսահման մեծ իրադարձություն տեղի ունեցավ 1957 թվականին: Սփյուռքահայ երիտասարդության ներկայացուցիչները հնարավորություն ստացան մայրենի լեզվով բարձրագույն բժշկական կրթություն ստանալ մայր հայրենիքում: Ստեղծվեց արտասահմանցի ուսանողների բաժինը, և սփյուռքի տարբեր գաղթօջախներից ժամանած հայազգի բազմաթիվ երիտասարդներ կարողացան ձեռք բերել բժշկի մասնագիտություն: Հետագայում, 1989թ., նախկին ԽՍՀՄ առողջապահության և բարձրագույն կրթության նախարարությունների կողմից կազմակերպված առաջին և ավարտական կուրսերի ուսանողների գիտելիքների ստուգումների արդյունքում բարձր որակավորման արժանանալուց անմիջապես հետո, մեր ինստիտուտում սկսեցին սովորել նաև այլազգի քաղաքացիներ (արաբներ, հնդիկներ, պարսիկներ և այլն): Ի դեպ հիշեցնենք, որ Խորհրդային Միության տասնյակավոր բժշկական ինստիտուտներից մերն առաջիններից մեկն էր, որ արժանացավ այդ պատվին:

Այժմ համալսարանում սովորում է 21 երկրներից, այդ թվում՝ Սիրիայից, Հնդկաստանից, Լիբանանից, Իրանից, Հունաստանից, ԱՄՆ-ից, Չինաստանից, Բրազիլիայից ժամանած շուրջ 1500 արտասահմանցի քաղաքացի: Համալսարանը սերտ կապեր է հաստատել նախկին շրջանավարտների, ինչպես նաև ԱՄՆ-ի, Սիրիայի, Լիբանանի հայկական բժշկական ասոցիացիաների հետ: Մեր նախկին սաներից շատերը դարձել են անվանի բժիշկներ և առողջապահության կազմակերպիչներ՝ իրենց երկրներում առավել բարձրացնելով Երևանի պետական բժշկական համալսարանի հեղինակությունը:

Համալսարանում 1958 թվականից հրատարակվում է «Ապագա բժիշկ» բազմատպաքանակը՝ ուսանող-

ների բարեկամն ու խորհրդատուն: Դրվատանքի է արժանի ուսանողական խորհրդարանի նախաձեռնությամբ «Medicus» ուսանողական ամսաթերթի հրատարակությունը, որտեղ ուսանողները հանդես են գալիս հետաքրքիր հրապարակումներով և առաջարկություններով:

Իր գործունեության ողջ ժամանակաշրջանում, բժշկական կադրերի պատրաստմանը զուգընթաց, համալսարանը զբաղվել է նաև գործնական բժիշկների մասնագիտացման ու որակավորման բարձրացման խնդիրներով: Այդ աշխատանքներն առավել նպատակասլաց և կանոնակարգված կազմակերպելու նպատակով 1958թ. ինստիտուտում ստեղծվեց բժիշկների կատարելագործման ֆակուլտետը, որի բազայի վրա էլ 1963թ. հիմնադրվեց բժիշկների կատարելագործման Երևանի համամիութենական ինստիտուտը (ներկայումս՝ Առողջապահության ազգային ինստիտուտ):

Մինչև 50-ական թվականների վերջը բժշկական ինստիտուտը պատրաստել է շուրջ 5000 բժիշկ երկու հիմնական (բուժական գործ և սանիտարական բժիշկ) մասնագիտություններով: Այդ ժամանակաշրջանում քանակական առումով այդ խնդիրն ինչ-որ չափով կարելի էր լուծված համարել: Սակայն հանրապետությունը մեծ կարիք ուներ մանկաբույժների ու ստոմատոլոգների: Նկատի ունենալով վերոնշյալը՝ 1958թ. կազմավորվեց մանկաբուժական, իսկ 1961-ին՝ ստոմատոլոգիական ֆակուլտետները՝ համապատասխան մասնագիտական ամբիոններով:

Համալսարանի մասնագիտացված ստորաբաժանումը՝ կենտրոնական գիտահետազոտական լաբորատորիան (ԿԳՀԼ) հիմնադրվել է 1964 թ.: 1992թ. ԿԳՀԼ-ն վերակազմավորվեց գիտահետազոտական կենտրոնի (ԳՀԿ), որն այժմ համալսարանում գործում է որպես ինքնուրույն ստորաբաժանում: Վերջին 15 տարիներին համալսարանի գիտահետազոտական կենտրոնի աշխատանքային կազմն ընդգրկվել է նորմայում և մի շարք հիվանդությունների դեպքում լիմֆոկինների կենսաբանական դերի ուսումնասիրությանն ուղղված գիտական ծրագրում:

Սրանից զատ, գիտական հետազոտություններ են կատարվում նաև առաջնային նշանակության շուրջ 30 թեմաների ուղղությամբ, որոնք ֆինանսավորվում են պետության կողմից: Այդ թեմաների մշակմանը ներգրավվել է շուրջ 100 գիտաշխատող: Դրամաշնորհային կարգով գործում է նաև բացառապես համալսարանի ուսանողներից և երիտասարդ գիտնականներից կազմված 29 գիտական խումբ:

Առանձնահատուկ է բժշկի մասնագիտությունը. ի տարբերություն մյուս մասնագիտությունների՝ բժշկությանն անդամագրված մասնագետը բուհն ավարտում է հանդիսավոր երդմամբ: Ավելի քան երկու հազարամյակի վաղեմություն ունեցող հիպոկրատյան հայտնի երդումը խորհրդային միությունում մի քանի տասնամյակ մոռացության էր մատնված: Եվ միայն 1971թ. վերականգնվեց մեծ իմաստ ու բովանդակություն ունեցող այդ ավանդույթը: Այժմ էլ մեզանում հաստատվել է հիպոկրատյան երդման հայաստանյան տարբերակը. Երևանի պետական բժշկական համալսարանի շրջանավարտները բուհի ղեկավարների, պրոֆեսորադասախոսական կազմի, նախարարության ներկայացուցիչների առջև հանդիսավոր երդվում են՝ հավատարիմ մնալ բժշկի բարձր կոչմանը, սրբությամբ կատարել իրենց մասնագիտական պարտականությունները:

Բժշկական ինստիտուտի կյանքում տեղի ունեցած կարևոր ու հիշարժան իրադարձություններից մեկն էլ 1972թ. դեղագիտական ֆակուլտետի հիմնումն էր, որը նշանակալից դեր խաղաց հանրապետությունը դեղագիտական բարձրորակ կադրերով ապահովելու գործում: Եվ, վերջապես, 1975թ. ստեղծվում է նախապատրաստական բաժանմունքը, որը խորհրդային տարիներին համալրվում էր արտաքրությունից եկած և բանակից զորացրված երիտասարդներով: Այսօր այդ բաժանմունքում սովորում են արտասահմանյան երկրների այլազգի քաղաքացիները և համապատասխան ծրագրով նախապատրաստվում են համալսարան ընդունվելու համար:

Երևանի բժշկականն իր գոյության բոլոր տարիներին պատրաստել է ավելի քան 28.000 բժիշկ, որոնցից շուրջ 2000-ը արտասահմանյան երկրների քաղաքացիներ են: Համալսարանի շրջանավարտներից շատերը դարձել են հանրաճանաչ գիտնականներ, ակադեմիկոսներ, առողջապահության հմուտ կազմակերպիչներ, գիտահետազոտական կենտրոնների, ինստիտուտների տնօրեններ ու գիտական բազմամարդ դպրոցների ղեկավարներ: Այսպես, ակադեմիկոսներ Հ. Բունիաթյանը, Վ. Ֆանարջյանը և Է. Գաբրիելյանը ընտրվել են ՀՀ ԳԱԱ փոխնախագահներ, Ս. Միրզոյանը, Վ. Մխիթարյանը, Լ. Հարությունյանը, Ռ. Ստամբոլցյանը, Գ. Բաղալյանը և ուրիշներ համալսարանում ղեկավարել են ամբիոններ, ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանը երկար տարիներ գլխավորել է Երևանի բժիշկների կատարելագործման ինստիտուտը, ներկայումս գիտահետազոտական տարբեր ինստիտուտների ղեկավարներ են ակադեմիկոսներ Է. Աֆրիկյանը, Կ. Աղամյանը, Ա.Գալոյանը, Հ. Ալեքսանյանը: Տասնամյակներ շարունակ Մոսկվայում իրենց գիտական բեղմնավոր գործունեությունն են ծավալել ակադեմիկոսներ Լ. Փիրուզյանը, Լ. Բաղալյանը, Մ.Վարդանյանը և ուրիշներ:

Ժողովրդական առողջապահության համար որակյալ մասնագետների պատրաստման և բժշկագիտության զարգացման գործում ունեցած ծառայությունների համար 1980թ. ինստիտուտը պարգևատրվեց Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով:

Ընդառաջելով մեր բուհի ուսանողների և աշխատակիցների ցանկությանը՝ ՀՀ նախարարների խորհուրդը 25.05.1989թ. թիվ 234 որոշմամբ Երևանի բժշկական ինստիտուտը անվանակոչեց միջնադարի մեծ բժշկապետ ու մտածող Մ. Հերացու անունով:

Բժշկական համալսարանի ուսանողության ու դասախոսների համար քաղաքացիական ու

մասնագիտական պարտքի դրսևորման մեծ փորձություն եղավ 1988թ. դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժը: Առանց երկմտանքի կարելի է արձանագրել, որ այդ ծանր օրերին ապագա բժիշկները գտնվեցին իրենց կոչման բարձրության վրա, ցուցաբերեցին բժշկական պարտքի, արիության ու մարդասիրության դրսևորման փայլուն օրինակներ:

Երևանի պետական բժշկական համալսարանի զարգացման պատմության մեջ առանձնահատուկ նշանակություն ունի վերջին տասնհինգամյակը: 1992-95 թվականներին հանրապետությունը հայտնվեց տնտեսական ու էներգետիկ դաժան ճգնաժամի մեջ: Կաթվածահար եղավ երկրի տնտեսությունը, տրանսպորտը և, իհարկե, նաև կրթական ողջ համակարգը: Սակայն գոհունակությամբ պետք է նշել, որ ճգնաժամային այդ դաժան տարիներին անգամ Երևանի պետական բժշկական համալսարանը, կոլեկտիվի նվիրվածության շնորհիվ, ոչ միայն չդադարեցրեց իր բնականոն գործունեությունը, այլև շարունակեց գոյատևել և նույնիսկ վերընթաց ապրել: Այդ ժամանակահատվածը բժշկական համալսարանի համար վստահաբար կարելի է համարել ուսումնական գործընթացի բարեփոխումների, տեխնիկական հագեցվածության և միջազգային համագործակցության ընդլայնման ժամանակաշրջան:

1990-ական թվականներին ստեղծված քաղաքական, գաղափարական, մշակութային, առողջապահական, տնտեսական իրավիճակը նոր պահանջներ դրեց կրթության նկատմամբ, այդ թվում՝ բարձրագույն բժշկական: Հրամայական պահանջ դարձավ ոչ միայն պահպանել բժշկական համալսարանի՝ տասնամյակների ձեռքբերումները, այլ նաև նոր ուղիներ փնտրել՝ այն զարգացնելու համար: Համալսարանը նախատեսեց իր վերափոխումները, որոնք ընթացան մի քանի ուղղություններով.

I – ուսումնական կրթական համալիրի առանձին ուղղությունների փոփոխում, ծրագրերի նորացում, նոր ամբիոնների բացում,

II – այդ փոփոխությունները դարձնել համահունչ միջազգային առաջավոր բժշկական բուհերին,

III – այդ դժվարին ֆինանսատնտեսական պայմաններում ուղիներ որոնել՝ նոր դրամական միջոցներ հայթայթելու համար:

Սակայն բժշկականի վերելքն ավելի ընդգծվեց հետճգնաժամային տարիներին՝ 1996 թվականից հետո, երբ հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքը սկսեց աստիճանաբար վերակենդանանալ, և նկատելիորեն ակտիվացան համալսարանի կապերը արտասահմանյան երկրների առաջատար բժշկական կենտրոնների հետ: Առանց չափազանցության կարելի է հավաստել, որ դրական միտումներն ու շոշափելի առաջընթացը առկա են համալսարանի գործունեության գրեթե բոլոր բնագավառներում՝ ուսումնական գործընթացի կատարելագործման, գիտական հետազոտությունների մակարդակի բարձրացման, ուսումնագիտական ստորաբաժանումների գործունեության բարելավման, միջազգային կապերի ընդլայնման ու ամրապնդման, առանձին մասնաշենքերի ու ամբիոնների վերանորոգման, ինչպես նաև աշխատակիցների սոցիալ-տնտեսական պայմանների նկատմամբ ցուցաբերվող մշտական հոգատարության ուղղությամբ:

Անցած տարիների աշխատանքների փորձը ցույց է տալիս, որ միջազգային չափանիշներին համապատասխան համալսարանական կրթություն ապահովելու նպատակով սկսված գործընթացը զգալիորեն առաջադիմում է: Դրա վառ վկայությունը ինչպես մինչդիպլոմային, այնպես էլ հետդիպլոմային ուսուցման համակարգում ժամանակի պահանջներին համահունչ ուսումնական նոր ծրագրերի ու պլանների արդյունավետ կիրառումն է: Դրանք առավելագույնս հավասարեցվել են Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի Դաշնության առաջատար բժշկական բուհերի ծրագրերին: Այդ իսկ նպատակով հիմնադրվել ու վերակազմավորվել են նոր ամբիոններ ու դասընթացներ, այդ թվում՝ կլինիկական իմունաբանության, անեսթեզիոլոգիայի, ինտենսիվ թերապիայի ու ռեանիմացիայի, հեմատոլոգիայի և տրանսֆուզիոլոգիայի, ուրոլոգիայի, ճառագայթային ախտորոշման, պլաստիկ վերականգնողական և միկրովիրաբուժության, պրոկտոլոգիայի ամբիոնները, ինչպես նաև բժշկական գենետիկայի, ռեպրոդուկտոլոգիայի և սեքսոպաթոլոգիայի, մոլեկուլային բժշկության դասընթացները: Այս առումով առավել հատկանշական է ընտանեկան բժշկության և ավանդական բժշկության ամբիոնի ստեղծումը (1997թ.):

Կիրառելով արևմուտքի առաջավոր բուհերի փորձը՝ 1999-2000 ուստարում կատարվեց ֆակուլտետների վերամիավորում: Մանկաբուժական և բժշկական-խարգելման ֆակուլտետներում դադարեցվեցին ընդունելության քննությունները, և այդ ֆակուլտետները ընդգրկվեցին բուժական ֆակուլտետի համակազմում՝ որպես ընդհանուր բժշկության ֆակուլտետ:

Բժշկական համալսարանի հետխորհրդային շրջանի պատմության մեջ տեղի ունեցած իրադարձություններից իր կարևորությամբ առանձնահատուկ տեղ է գրավում ռազմաբժշկական ֆակուլտետի բացումը: Ըստ արժանվույն գնահատելով մեր նորանկախ պետության համար ֆիզիկապես ամուր, առողջ ու մարտունակ բանակ ունենալու, ինչպես նաև բանակը բարձրորակ զինվորական բժիշկներով ապահովելու կարևորությունը՝ ՀՀ կառավարության որոշմամբ 1994թ. բժշկական համալսարանի ռազմական պատրաստականության ամբիոնի բազայի վրա հիմնադրվեց և այսօր էլ հաջողությամբ գործում է ռազմաբժշկական ֆակուլտետը: Անցած տասը տարիների ընթացքում համալսարանի ղեկավարության և ՀՀ պաշտպանության նախարարության համատեղ ջանքերով ֆակուլտետը վերածվեց ժամանակակից ռազմաբժշկական օրինակելի ուսումնական ստորաբաժանման:

Հանրապետության բուհերից բժշկականը միակն է, որ անցում կատարեց ուսանողների գիտելիքների

գնահատման 10 բալանոց համակարգին, որն անկասկած առաջադիմական է և նպաստում է գիտելիքների առավելագույնս ճիշտ ու օբյեկտիվ գնահատմանը:

Քանի որ ԽՍՀՄ կազմալուծման հետևանքով բժշկականի դասախոսները զրկվեցին նախկին միության կենտրոնական քաղաքներում որակավորման բարձրացման հնարավորություններից, 1997թ. բժշկական համալսարանում կազմավորվեց ու հաջողությամբ գործում է դասախոսների որակավորման բարձրացման դասընթացը:

Բարձրագույն կրթությամբ բժշկական կադրերի պատրաստման և բժշկագիտության տարբեր բնագավառների զարգացման գործում անգնահատելի ծառայություններ ունեն համալսարանի ռեկտորները, որոնց ջանքերի շնորհիվ աստիճանաբար ընդլայնվել են ուսումնական և գիտական բազաները, ամբիոններն ու լաբորատորիաները հարստացել են նորագույն բժշկական սարքավորումներով, որոնք հնարավորություն են ընձեռում ժամանակի պահանջներին համապատասխան մակարդակով կազմակերպելու ոչ միայն ուսումնական գործընթացը, այլև՝ բժշկագիտության տարբեր բնագավառներում կատարվող գիտահետազոտական աշխատանքները: Ռեկտորներից հատկապես պետք է առանձնացնել Վ. Միքայելյանին, որը համալսարանի 75-ամյա պատմության ընթացքում միակ կինն էր, որին և վստահվել էր այդ պատասխանատու պաշտոնը: Հիշատակության են արժանի ռեկտորներ Հ. Հովհաննիսյանը, Գ. Ղևոնդյանը, Ն. Հակոբյանը, Ս. Գալստյանը, Է. Գաբրիելյանը, Վ. Աստվածատրյանը, որոնց ղեկավարությամբ համալսարանը հասավ բացառիկ հաջողությունների և ձեռք բերեց մեծ հեղինակություն:

Երևանի պետական բժշկական համալսարանն իր գործունեության ողջ ժամանակաշրջանում բարձրակարգ բժշկական կադրեր պատրաստելուց բացի, լուրջ ու ծանրակշիռ ներդրում է ունեցել խորհրդային ու համաշխարհային բժշկագիտության զարգացման ասպարեզում: Համալսարանի գիտնականները բազմիցս հանդես են եկել մի շարք նորարարական առաջարկներով, որոնց ներդրումը գործնական առողջապահության մեջ նպաստել է հիվանդների բուժման ու հիվանդությունների կանխարգելման հիմնախնդիրների լուծմանը: Ակնառու են բժշկական համալսարանի գիտնականների նվաճումները տեսական ու կիրառական բժշկության բոլոր բնագավառներում: Նրանց ղեկավարությամբ ու ակտիվ մասնակցությամբ Հայաստանում ստեղծվել են բժշկագիտության մի շարք ճյուղեր, այդ թվում բժշկական մանրէաբանություն, համաճարակաբանություն, ռենտգենաբանություն, ախտաբանական անատոմիա, նյարդավիրաբուժություն, սրտաբանություն և այլն: Զգալի են մեր գիտնականների ծառայությունները նաև վիրուսաբանության, կենսաքիմիայի, իմունաբանության, դեղաբանության, մակաբուծաբանության և բժշկագիտության այլ ճյուղերի զարգացման բնագավառներում:

Գիտամանկավարժական կադրերի մի քանի սերունդների ջանքերով բժշկական համալսարանը դարձել է գիտաբժշկական հաստատություն, առանց որի այսօր անհնար է լուծել հանրապետության առողջապահության առջև ծառացած հիմնախնդիրները: Այսօր չափազանց մեծ ու ծանրակշիռ է բժշկական համալսարանի գիտական ներուժը: Գիտական հետազոտություններն ունեն հետևյալ հիմնական ուղղությունները.

1) ՀՀ-ում տարածված հիվանդությունների բուժման ու կանխարգելման ժամանակակից միջոցառումների մշակում ու ներդրում,

2) հիմնարար գիտական հետազոտություններ՝ նվիրված առողջ ու հիվանդ մարդկանց օրգանիզմի կառուցվածքային ու ֆունկցիոնալ առանձնահատկությունների ուսումնասիրմանը և նրանց՝ շրջակա միջավայրի հարմարվողականությանը,

3) հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման և բուժման նոր մեթոդների մշակումը և ներդրումը:

Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում այսօր գիտահետազոտական արգասաբեր աշխատանք է կատարում ՀՀ ԳԱԱ չորս ակադեմիկոս, երկու թղթակից անդամ, ՌԴ ԲԳԱ մեկ թղթակից անդամ, գիտությունների 132 դոկտոր, պրոֆեսոր և 400 թեկնածու և դոցենտ: Տարբեր տարիներին համալսարանում աշխատել է նախկին ԽՍՀՄ ԲԳԱ և Հայաստանի ԳԱ, ինչպես նաև ներկայումս ՀՀ ԳԱԱ և ՌԴ ԲԳԱ 17 ակադեմիկոս և թղթակից անդամ, ՀՀ գիտության և բարձրագույն դպրոցի 55 վաստակավոր գործիչ:

Համալսարանում լուրջ ու հետևողական աշխատանքներ են տարվում ուսումնագիտական ստորաբաժանումների և ամբիոնների տեխնիկական հագեցվածության ուղղությամբ: Վերջին տարիների ընթացքում ձեռնարկված բազմաբնույթ միջոցառումների արդյունքում համալսարանի համարյա բոլոր ամբիոնները համալրվել են ուսումնական վարժասարքերով, ապահովվել համակարգչային տեխնիկայով, համակարգչային դասասենյակներով, ժամանակակից բժշկական և լաբորատոր սարքավորումներով, ստեղծվել է համալսարանական ներքին տեղեկատվական ինտերնետային ցանց: Օրեցօր մեծանում են ուսանողների ինքնուրույն աշխատանք կատարելու հնարավորությունները:

Բժշկական համալսարանական կրթության բովանդակությունն անընդհատ նորացվում է՝ պայմանավորված բժշկագիտության բնագավառում նոր ուղղությունների զարգացմամբ:

Բժշկական կրթության բարձր որակի ապահովման գլխավոր երաշխիքներն են՝ ուսումնական գործընթացի մեթոդական անընդմեջ կատարելագործումը, գիտության ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, որը և պայմանավորում է դասավանդման, գիտելիքների ստուգման, գործնական ունակությունների ձեռքբերման բարձր մակարդակ: Այն ընդգրկում է համալսարանի բոլոր գործառույթներն ու գիտամանկավարժական գործունեության ուղղությունները:

Այդ նպատակով նախատեսվում է ներդնել ուսուցման նոր մեթոդներ, ստեղծել ժամանակակից տեղեկատվության և հեռուստահաղորդակցման համապարփակ համակարգ՝ ամբողջացնելու համալսարանի ուսումնական նյութատեխնիկական բազան, մտավոր ներուժն ու նորացվող գիտելիքի ողջ զինանոցը՝ գրադարանային ֆոնդը և տեղեկատվական միջոցները: Ֆինանսական մեծ ծախսեր պահանջող այս գործընթացն, անկասկած, մեծ ժամանակ է պահանջում:

Հեռանկարում կպահանջվեն համակարգչային դասագրքեր կամ ուսումնական ձեռնարկներ, որոնք ուսանողների համար պետք է լինեն մատչելի, ունենան տեղեկատվության անհրաժեշտ ծավալ և առավելագույնս ցուցադրական լուսաբանող նյութ, որն ուսանողից կպահանջի ոչ թե մեխանիկական մտապահում, այլ՝ ակտիվ մտավոր ունակություն:

Բժշկական բարձրագույն կրթության որակի ապահովման գործոններից է նաև ինտերնետ ցանցով հեռահար ուսուցման մեթոդի ներդրումը: Ուսումնական նյութերի նման ձևը կգերակշռի ուսումնական գործընթացում՝ ներդնելով ցանցային հեռաուսուցման տարբեր՝ սովորողներին ուսումնամեթոդական և ուսուցողական-ստուգողական նյութերով ապահովելու համար: Հեռաուսուցման գործընթացն ապահովելու համար, ավանդական տեղեկատվական միջոցների հետ մեկտեղ, պետք է օգտագործվեն հեռաուսուցման հետևյալ միջոցները՝ մասնագիտացված դասագրքեր մուլտիմեդիայի ուղեկցությամբ, էլեկտրոնային ուսումնամեթոդական համալիրներ, էլեկտրոնային դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, տրենինգային համակարգչային ծրագրեր, համակարգչային լաբորատոր գործնական պարապմունքներ, ստուգողական-թեստավորման լրակազմեր, ուսումնական տեսաֆիլմեր, առդիոգրանցումներ, հեռահաղորդակցման համար նախատեսված այլ նյութեր:

Հեռահար ուսուցումն ապահովվում է կրթական տեխնոլոգիաների համալիր կիրառմամբ, որի դեպքում ուսանողի և դասախոսի նպատակասլաց միջնորդավորված կամ ոչ լրիվ միջնորդավորված փոխգործունեությունն ընթանում է անկախ նրանց գտնվելու վայրից և ժամանակի տարաբաշխումից՝ հիմնված մանկավարժորեն կազմակերպված տեղեկատվական տեխնոլոգիաների և առաջին հերթին հեռահաղորդակցման միջոցների կիրառումով:

Միաժամանակ ակնհայտ է, որ նոր տեխնոլոգիաները չպետք է և չեն կարող ամբողջությամբ փոխարինել ավանդականին: Դրանք պետք է փոխադարձաբար լրացնեն մեկը մյուսին, քանի որ բժշկությունն ունի այնպիսի առանձնահատկություններ, որոնք թույլ չեն տալիս փոխարինել բժիշկների պատրաստման դասական համակարգը: Հետևաբար, վիրտուալ ուսուցումը չի կարող փոխարինել բժշկության ուսուցման այնպիսի դասական ձևերին, ինչպիսիք են՝ հիվանդի հետ շփումը, մանուալ հմտությունները, բժշկական մտածողության արվեստը:

Բժշկական բարձրագույն կրթության հիմնական նպատակը մասնագիտական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումն է: Թե ինչպիսին է մեր հանրապետությունում բժշկությունն այսօր և ինչպիսին կլինի վաղը, անմիջականորեն կապված է կրթական համակարգի ողջ համալիրի ճիշտ վերակառուցման հետ: Անվիճելի է, որ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքի ապահովումը հնարավոր է միայն բարձրորակ կադրեր պատրաստելու եղանակով: Այդ գործում բացառիկ կարևոր դեր ունեն բարձրագույն բժշկական և դեղագիտական կադրերը, որոնք և պետք է իրականացնեն բուժման, հիվանդությունների կանխարգելման, գիտության զարգացման առաջընթացը և ժամանակակից միջազգային դեղային քաղաքականությունը:

Վերջին տարիներին համալսարանում իրականացվում է գնահատման նոր՝ ռեյտինգային համակարգ, որի նպատակն է կրթական ծրագրի յուրացման ընթացքում գնահատել ուսանողի աշխատանքը, որն իր մեջ ներառում է հաճախումները դասախոսություններին և գործնական պարապմունքներին, ընթացիկ հարցումների գնահատականները, գործնական ունակությունների տիրապետման մակարդակը, քննական գնահատականը, ուսանողական գիտական աշխատանքներին արդյունավետ մասնակցությունը:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, կրթական ծառայությունների արտահանումը խիստ շահութաբեր է ցանկացած պետության համար: Մեր կարծիքով, Հայաստանի հանրապետությունում այդ գործընթացը դեռևս չի արժանացել անհրաժեշտ ուշադրության: Հիմնական պատճառը կրթական ծառայությունների արտահանման պետական նպատակային ծրագրերի, բոլոր հիմնական սուբյեկտների կոորդինացված հստակ գործողությունների բացակայությունն է:

Մեր խորին համոզմամբ Հայաստանի բարձրագույն դպրոցներն ունեն համապատասխան գիտամանկավարժական հզոր ներուժ և անհրաժեշտ մեկնարկային պայմաններ՝ բարձրացնելու մրցունակությունը կրթության շուկայում և խթանելու զարգացող երկրների քաղաքացիներին կրթական ծառայությունների արտահանումն ապահովող գործընթացը: Աննրելի ռազմավարական սխալ թույլ կտանք՝ չօգտագործելով մեր հնարավորությունները: Սակայն այդ ամենը իրատեսական չի կարող է լինել առանց պետական համակողմանի աջակցության:

Մեր կարևոր ձեռքբերումներից է նաև համալսարանի ամբիոնների երիտասարդացմանն ուղղված քայլերը: Հաշվի առնելով բժշկական համալսարանի բարձր վարկանիշը և միջազգային ճանաչումը՝ համալսարանի վաղվա օրվա զարգացումն ապահովելու գիտակցությամբ առանձնահատուկ կարգավիճակ ստացավ անգլերեն լեզվի ուսուցումը: Նպատակասլաց գործունեության շնորհիվ վերջին 4-5 տարիների ընթացքում ամբիոնները համալրվեցին խոստումնալից երիտասարդներով, որոնց հենքի վրա 2002թ

հնարավոր դարձավ անգլերեն լեզվով ուսուցման ֆակուլտետի բացումը:

Որո՞նք էին այն հիմնապատճառները, որ դրդեցին մեզ՝ անցնելու անգլերեն լեզվով ուսուցման: Հիշենք՝ ինչպիսի ծանր իրավիճակ էր հանրապետությունում 1992թ. և դրան հաջորդող տարիներին. բժշկական կադրերի գերհագեցվածության պատճառով կառավարությունը ստիպված եղավ վեց անգամ կրճատելու մեր բուհ ընդունվող ուսանողների պետպատվերը: Պայմանավորված բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների վատթարացմամբ՝ կտրուկ նվազեց բարձրագույն կրթություն ստանալու ձգտումը, ինչին մեծապես նպաստեց նաև վճարովի համակարգի ստեղծումը:

Բնական է, որ մեր՝ պետական միակ բարձրագույն բժշկական համալսարանը, որն իրավամբ վաստակել է միջազգային համբավ, վաղվա օրվա զարգացումն ապահովելու գիտակցությամբ, պետք է ուղիներ որոներ՝ ոչ միայն պահպանելու նախկինում ունեցած ձեռքբերումները, այլ նաև առաջընթաց քայլերով ունենալու նոր նվաճումներ:

Գիտակցելով, որ փոքր ազգերին մայրենիից զատ օդի պես անհրաժեշտ է օտար լեզուների իմացությունը, 1992թ. համալսարանի խորհրդի որոշմամբ ավելացվեց ռուսաց և օտար լեզուների դասաժամերը: Դեռևս 1988թ. նախապատրաստական բաժանմունքի այլազգի ուսանողների ուսուցումը կազմակերպվում էր ռուսերեն լեզվով: Փորձը ցույց տվեց, որ այն անբավարար էր՝ ուսանողների թիվը կտրուկ ավելացնելու համար, ուստի, որոշվեց քայլեր ձեռնարկել՝ նաև անգլերեն լեզվի իմացությունը կատարելագործելու ուղղությամբ:

Այդ իսկ պատճառով առաջին հիմնական և կարևոր որոշումը եղավ գերազանցության դիպլոմ ստացող շրջանավարտների համար պարտադիր պայման համարել օտար և մասնավորապես՝ անգլերեն լեզվի գերազանց իմացությունը: Այդ պահանջը ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների կողմից սկզբում թերևս ընդունվեց դժգոհությամբ: Հաջորդ քայլն ամբիոնները երիտասարդ կադրերով համալրելիս անգլերենի իմացության պարտադիր պայմանն էր: Այդ երկու պահանջը կտրուկ բարձրացրեցին և՛ ուսանողության, և՛ երիտասարդ աշխատակիցների՝ անգլերենի նկատմամբ ունեցած վերաբերմունքը: Եվ երբ 1996թ. ամբիոններում (մասնավորապես՝ առաջին երեք կուրսերում) ի հայտ եկան անգլերեն լեզվին տիրապետողներ, զգուշորեն, առանց աղմուկի առաջարկվեց այլազգիների ուսուցումը կազմակերպել նաև անգլերեն լեզվով: Ի պատիվ մեր ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի (հատկապես՝ ամբիոնների վարիչների) բարի կամքի դրսևորման՝ աստիճանաբար եղան դրական արձագանքներ: Վերջին մի քանի տարիների ընթացքում համապատասխան գործընթացում ակտիվորեն ընդգրկվեցին նորավարտ, հիմնականում գերազանց առաջադիմությամբ ասպիրանտները և անգլերեն լեզվին տիրապետող շրջանավարտները: Քանի որ անգլերեն լեզվին տիրապետում են հիմնականում նորավարտ դասախոսները, պետք է բարձրացնել նրանց մասնագիտական և մանկավարժական հմտությունների մակարդակը:

Հարկ է նշել, որ համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գերակշիռ մասն ունի երկար տարիների մանկավարժական, գիտագործնական աշխատանքների բազմահմուտ փորձ, բարձր գիտակցությամբ է մոտենում համալսարանում տարվող քաղաքականությանը և մասնագիտա կան բարձր մակարդակով է կատարում իր առաքելությունը արտասահմանյան երկրների համար բարձրորակ բժշկական կադրեր պատրաստելու գործում: Տարեցտարի ավելանում է մեր համալսարանում անգլերեն լեզվով սովորել ցանկացող այլազգի ուսանողների թիվը, այսօր արդեն այդ համակարգում սովորում է ավելի քան 600 ուսանող:

Այժմ արդեն կարող ենք արձանագրել, որ անգլերեն լեզվով ուսուցումը կայացել է, և արվել է հնարավոր ամեն ինչ՝ պատշաճ մակարդակով այն շարունակելու համար:

Վերջին տարիներին համալսարանում տեղի է ունեցել չափազանց կարևոր իրադարձություն ևս. մեր համալսարանում նեղ մասնագիտացում (կլինիկական օրդինատուրա) են ստանում արտասահմանյան երկրներում բարձրագույն բժշկական կրթություն ստացած այլազգի բժիշկներ:

Գաղտնիք չէ, որ բժշկական համալսարանում արտասահմանցի ուսանողների ուսուցումն ունի թե՛ քաղաքական, և թե՛ տնտեսական մեծ նշանակություն: Ելնելով այդ երկրների աշխարհագրական, բնակլիմայական պայմաններից՝ մի շարք կլինիկական առարկաների դասավանդումը հարմարեցվել է յուրահատուկ հիվանդությունների ախտորոշման, կանխարգելման և բուժման առանձնահատկություններին (օրինակ՝ արևադարձային, բնական-օջախային և տեղաճարակային-վարակային, մակաբուծային հիվանդություններ և այլն), որոնք ենթադրում են ապագայում համալսարանական կլինիկական հիվանդանոցներում բացելու նոր բաժանմունքներ:

Վերջին տարիներին ընդլայնվում է արտերկրի քաղաքացիների, մասնավորապես՝ Ասիայից, Եվրոպայից և ԱՄՆ-ից ընդունելության աշխարհագրությունը, որը բժշկական համալսարանի՝ աստիճանաբար աճող միջազգային դրական վարկանիշի արդյունքն է:

Այդ վարկանիշի շնորհիվ 2000թ. հունվար ամսից համալսարանն անդամակցում է համալսարանների միջազգային International Universities of UNESCO (IUU) և եվրոպական ասոցիացիաներին:

Բժշկական համալսարանն առանձնապես ակնառու հաջողություններ ունի միջազգային կապերի զարգացման ու համագործակցության ընդլայնման գործում Սերտ ու գործարար կապեր են հաստատվել Ֆրանսիայի, Հունաստանի և ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Իրանի և այլ երկրների բժշկական կենտրոնների հետ:

Շարունակվում և խորացվում է Ռուսաստանի Դաշնության, Եվրոպայի, Հնդկաստանի, ԱՄՆ-ի շուրջ 30 համալսարանների հետ արդեն սկզբնավորված համագործակցությունը, որի շնորհիվ տարեցտարի ընդլայնվում է դասախոսների, ուսանողների և կլինիկական օրդինատորների փոխայցելությունների շրջանակը:

Այժմ քայլեր են կատարվում մեզ համար բոլորովին նոր՝ ամերիկյան ուսումնական ծրագրերով բարձրագույն բժշկական կադրեր պատրաստելու ուղղությամբ: Այն ենթադրում է համալսարան ընդունել ԱՄՆ-ի և Կանադայի բժշկական քոլեջի օտարազգի շրջանավարտներին: Այդ նպատակով ԱՄՆ-ում ստեղծվել է գրասենյակ, որի ղեկավարումը ստանձնել է Կալիֆորնիայի հայ բժիշկների միության նախագահը: Վերջինիս անմիջական աջակցությամբ մեր համալսարանին կտրամադրվեն Կալիֆորնիայի Լոս Անջելեսյան համալսարանի հետ համաձայնեցված անհրաժեշտ դասագրքեր, ցուցադրական և լաբորատոր աշխատանքի նյութեր: Այդեղ ստացել ենք ամերիկյան ուսուցման համակարգի ուսումնական ծրագրերը և պլանները: Մոտ ապագայում համալսարանի ինտերնետ էջում կներկայացվեն տեղեկություններ՝ ընդունելության պայմաններին և մեր համալսարանին ծանոթանալու համար:

Այս նորամուծությունը ևս կնպաստի բժշկական համալսարանի հեղինակության բարձրացմանը և, իհարկե, ֆինանսական վիճակի բարելավմանը:

Կարևորում ենք նաև անգլախոս ուսանողների՝ հայերենի իմացությունը. ուսումնառության 6-7 տարիներին սովորելով և բնակվելով հայախոս շրջապատում, բնականաբար, անհրաժեշտություն է առաջանում որոշակի գիտելիքներ ունենալ՝ հայերեն հաղորդակցվելու համար: Բարձր կուրսերում մասնագիտական ուսումնական ծրագրով նախատեսված կլինիկական ամբիոններում և հիվանդանոցներում տարվող ուսումնական պարապմունքների ժամանակ՝ որպես ապագա բժիշկներ, անհրաժեշտություն կունենան հիվանդի անկողնու մոտ զրուցելու, լսելու նրանց գանգատները և խորհուրդներ տալու: Հասկանալի է, որ այլազգի բժշկի և հայախոս հիվանդի միջև երկխոսությունը միայն հայերենով կարող է լինել: Բացի այդ, տեղացի ոչ բոլոր բժիշկներն են տիրապետում անգլերենին, ուստի նրանց համագործակցությունը ևս հնարավոր է միայն մեր պետական և ազգային լեզվին տիրապետելու դեպքում:

Մեր հիմնական նպատակը արտասահմանյան երկրների համար բարձրորակ բժշկական կադրերի պատրաստումն է, որպեսզի վերջիններս մրցունակ լինեն իրենց երկրներում և բարձր պահեն մեր բուհի վարկանիշը: Մեր կարևոր խնդիրներից է ուսումնական գործընթացի հետագա կատարելագործումը, որպեսզի համալսարանի ցանկացած կուրսի ուսանող, առանց տարի կորցնելու, կարողանա նաև ուսումը շարունակել արևմուտքի համալսարաններում, և՝ հակառակը:

Վերջին ժամանակներս բժշկական բարձրագույն կրթական համակարգում առաջարկվում է ուղենիշ ընդունել բոլոնյան հռչակագրի (ստորագրվել է 1999թ. 29 երկրների կողմից, հետագայում նրան միացել են Հայաստանը, Ռուսաստանի Դաշնությունը և այլ երկրներ) դրույթները: Այդ համաձայնագրի նպատակն է եվրոպական տարածաշրջանում ստեղծել միասնական կրթական համակարգ, որը ենթադրում է դիպլոմների երկկողմանի ճանաչում, ուսանողների և դասախոսների ազատ շարժողունակություն (այսինքն՝ ցանկացած կիսամյակում ուսուցումը կարելի է շարունակել այլ բուհում), երկաստիճան (բակալավր և մագիստր) կրթական համակարգի անցում, գնահատման միասնական չափանիշներ և գիտելիքների ձեռքբերման լայն ծավալներ:

Ընդունելով բոլոնյան հռչակագրի պահանջների դրական կողմերը, այնուհանդերձ, բժշկական կրթությունում երկաստիճան համակարգը պետք է համարել անընդունելի: Բանն այն է, որ համաձայն այդ կոնցեպցիայի, բակալավրային 3-4 տարվա ուսուցումից հետո, ուսանողների շուրջ 40-50%-ը պետք է անցնի երկրորդ փուլ՝ մագիստրատուրա: Իսկ ի՞նչ է նշանակում բժշկության մեջ բակալավրը, ի՞նչ կարող է նա անել երեք կամ չորսամյա ուսուցումից հետո: Նույնիսկ տաղանդավոր անձը չի կարող որպես բժիշկ աշխատել և աշխատանքային շուկայում տեղ գտնել: Հետևաբար, այդ աստիճաններն անընդունելի են բժշկական բարձրագույն կրթական համակարգում, և դրանք կարող են իրականացվել միայն տեխնիկական բուհերում (նման կարծիք կա եվրոպական բազմաթիվ երկրներում):

Ցավոք, ուսուցման այդ կարգն արդեն ընդունվել է «ՀՀ բարձրագույն կրթության օրենքում» և մենք ամեն ինչ պետք է անենք՝ օրենքում փոփոխություններ մտցնելու համար:

Միանշանակ պետք է համաձայնվել, որ ներկա պայմաններում բարձրագույն բժշկական կրթական համակարգում գերիշխում են միջազգային՝ հիմնականում ընդհանուր ճանաչում ստացած հետևյալ փուլերը.

I) բազային բժշկական կրթություն,

II) հետդիպլոմային բժշկական կրթություն,

III) շարունակական (մշտական, ամբողջ կյանքի ընթացքում) բժշկական կրթություն:

Մեր համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հիմնական նպատակը պետք է ուղղված լինի այդ փուլերով կրթության ապահովմանը: Ըստ էության մեր, ինչպես նաև աշխարհի բազմաթիվ երկրներում, ներկայումս կիրառվող բժշկական կրթական համակարգը շատ մոտ է այդ ձևին:

Հայտնի ճշմարտություն է, որ բժշկական համալսարանը և կլինիկական ուսումնական բազաները օրգանապես փոխկապակցված են և կազմում են մեկ ամբողջություն:

Ապագա բժիշկների պատրաստման գործում և հետդիպլոմային ուսուցումը լավագույնս կազմակերպելու հետևողական աշխատանքի շնորհիվ ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 23-ի թիվ 450 որոշմամբ, որպես համալսարանական կլինիկական հիվանդա-

նոցներ, բժշկական համալսարանի ենթակայությանը հանձնվեց իր հարևանությամբ գտնվող հիվանդանոցային համալիրը, իսկ 2003թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1413 որոշմամբ նաև՝ «Հայք» բժշկական կենտրոնը: Այսօր համալսարանը ձեռք է բերել նաև ստոմատոլոգիական 2 կլինիկա, ուսանողական 3 բազմահարկ հանրակացարան, 3 հանգստյան տուն:

Այդ կլինիկաները համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի շնորհիվ, բարձրորակ բժշկական օգնություն իրականացնելուց բացի, այսօր դարձել են նաև բժշկական կադրերի պատրաստման, նրանց որակավորման բարձրացման, գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման և բժշկագիտության նվաճումները գործնական առողջապահության մեջ ներդնելու առաջնակարգ կենտրոններ: Դրանք միավորում են մասնագիտական ընդհանրություն և կլինիկական աշխատանքների մեծ փորձ ունեցող դասախոսներին ու բուժաշխատողներին, ապահովում ապագա բժիշկների պատրաստումը և ազգաբնակչության՝ բարձրորակ մասնագիտական բժշկական օգնության կազմակերպումը:

Վաղվա օրվա հրատապ խնդիրներից է համալսարանական կլինիկաների ձևավորումը և կահավորումը: Հետևողականորեն վերակառուցվում և վերանորոգվում են համալսարանական կլինիկաները և բաժանմունքները: Ստեղծվել են լավ կահավորված բաժանմունքներ, այդ թվում՝ սրտաբանության (դիագնոստիկայի ամբիոն), իմունաբանության (կլինիկական իմունոլոգիայի և ալերգոլոգիայի ամբիոն), Ա.Օնասիսի անվան անոթավիրաբուժության, թերապևտիկ և օրթոպեդիկ ստոմատոլոգիաների ամբիոնները և կլինիկաները և այլն: Ժամանակի ընթացքում կվերանայվի համալսարանական կլինիկաների վերապրոֆիլավորման հնարավորությունը՝ նպատակ ունենալով մի կողմից պահպանելու ողջ մահճակալային ֆոնդը, մյուս կողմից հրաժարվելու ֆինանսական տեսակետից ոչ օգտավետ և ուսումնական գործընթացի համար ոչ կարևոր բաժանմունքներից: Մենք նպատակ ունենք աստիճանաբար համալսարանական կլինիկաներում աշխատող ավագ բուժանձնակազմը փոխարինել այդ բազաներում տեղակայված ամբիոնների և լաբորատորիաների աշխատակիցներով, իսկ միջին և կրտսեր անձնակազմը՝ միջին և բարձր կուրսերի ուսանողներով:

Մենք պետք է ձգտենք համալսարանի կլինիկական հիվանդանոցները կարճ ժամանակամիջոցում վերազինել ժամանակակից բժշկագիտական սարքավորումներով, որով կլուծվեն թե՛ համալսարանի ուսանողների մասնագիտական կրթության կազմակերպման, թե՛ սոցիալապես անապահով խավի առողջության պահպանման խնդիրները:

Մենք պետք է պաշտպանենք գիտությունը և կրթությունը ներկայիս «շուկայական մեխանիզմներից»: Գաղտնիք չէ, որ վերջին տասնամյակում ամեն ինչ «հաշվարկվում է» շուկայական օրենքներով, որը խիստ բացասաբար անդրադարձավ բժշկական համալսարանի աշխատանքներում: Սեփականաշնորհման արդյունքում համալսարանը զրկվեց ստոմատոլոգիական պոլիկլինիկաներից, դեղատներից և համարյա բոլոր կլինիկական հիվանդանոցներից: Այժմ համալսարանն ամեն ինչ անում է՝ իր ունեցած նվազագույն տարածքներով ապահովելու ժամանակի պահանջներին համահունչ ուսումնական գործընթաց, որի հիմնական նախապայմանը տեխնիկական հագեցվածությամբ ժամանակակից նոր կլինիկաների կառուցումն է:

Երևանի պետական բժշկական համալսարանը, լինելով բժշկագիտական խոշորագույն կենտրոն, չի կարող օտարվել Հայաստան աշխարհի առօրյա իրավիճակից և բազում հոգսերից ու ժողովրդի առողջության պահպանման պատասխանատվությունից: Նաև այս կարևոր փաստարկներով են հիմնավորվում բժշկական բարձրագույն դպրոցի բարեփոխմանը և զարգացմանը նպատակաուղղված մեր ամենօրյա պայքարն ու ձեռնարկումները: Հույս ունենք, որ այս բազում ծրագրերի իրագործումը կխթանի ոչ միայն Հայաստանում բժշկական կրթության նոր որակի ստեղծումը, բուժօգնության մակարդակի բարձրացումը, այլև մեր համալսարանի միջազգային ճանաչումը և նրա դերի բարձրացումը:

Ներբուհական աշխատանքների կազմակերպման գործում մեծ է ուսանողության և նրա կառույցների, մասնավորապես՝ ուսանողական խորհրդարանի դերը: Վերջինս կազմավորվել է 1992թ. մեր համալսարանի ուսանողների նախաձեռնությամբ և առաջին նմանատիպ երիտասարդական կառույցն է հանրապետության բուհական համակարգում: Համալսարանի ղեկավարությունը համակողմանի աջակցություն է ցուցաբերում ու հովանավորում ուսանողությանը, նրանց՝ գովեստի արժանի և օգտակար աշխատանքներում:

Ուսանողական կազմակերպություններից հիշատակության արժանի է հատկապես «Ուրախների և հնարամիտների ակումբը», որը երկար տարիներ միջազգային մրցույթներում շահել է առաջնություն, դարձել չեմպիոն և բարձր պահել ինչպես համալսարանի, այնպես էլ հանրապետության պատիվը:

Մեծ ուշադրություն է հատկացվում նաև ուսանողների ֆիզիկական դաստիարակությանը: Ներկայումս համալսարանում գործում է շուրջ 12 մարզական խումբ: Ուրախությամբ կարելի է արձանագրել, որ հանրապետական միջբուհական առաջնություններում մեր ուսանողները բազմիցս գրավել են մրցանակային տեղեր:

Մեզանից պահանջվում է պատրաստել այնպիսի բժիշկներ, որոնք մասնագիտական հարցերում կողմնորոշվելուց զատ, լինեն գաղափարապես և քաղաքականապես հասուն քաղաքացիներ: Շարունակելով առաջավոր երկրների կրթական օջախների փորձը՝ մեր համալսարանում մեծ տեղ է հատկացվում ապագա բժիշկների ինքնուրույն գիտական աշխատանքներին: Տարիներ շարունակ համալսարանի շատ ուսանողներ, ողջ ուսումնական գործընթացին զուգընթաց,

իրենց գիտական առաջին փորձերն են կատարում տեսական և կլինիկական ամբիոններում: Պրոֆեսոր-դասախոսական անձնակազմն իր հերթին անում է ամեն ինչ՝ ապագա բժիշկների մեջ արթնացնելու ստեղծագործական միտք և քաղաքացիական պարտքի զգացում, որպեսզի վերջիններս գիտության հանդեպ կենդանի հետաքրքրությամբ և բանիմացությամբ կարողանան ուսումնասիրել գիտության ակունքները:

Կրթությունը, ինչպես և գիտությունը, մշտապես երիտասարդ արժանավոր ուսանողների ներհոսքի կարիքն ունի: Մեր ամենօրյա գործունեության ընթացքում պետք է մտածենք ապագայի մասին, իսկ այդ ապագան մեր ուսանողներն են, հետևաբար մեր գլխավոր խնդիրն է հումանիստ բժիշկ-մտավորականի ճիշտ ձևավորումը և բարոյական կրթությունը, ժողովրդի առողջության համար պայքարող մարտիկի դաստիարակումը: Ուստի բարձրորակ մասնագետներ և հումանիստ բժիշկներ պատրաստելու նպատակով մենք պետք է ձգտենք ուսումնական բոլոր տարիների ընթացքում ունենալ ուսանողական ակտիվ հասարակություն, որի կազմի մեջ լինեն ընդունակ, հիմնարար գիտելիքներ ձեռք բերելու խիստ շահագրգիռ և բարոյական վեհ հատկանիշներով օժտված երիտասարդներ: Մեր դաստիարակությունը չի կարող սահմանափակվել միայն ուսյալ բժիշկներ պատրաստելով, քանզի ազնվացնում են ոչ միայն գիտելիքները, այլև սերն ու ձգտումը դեպի կյանքի ճշմարտությունը, որոնք մարդու մեջ արթնանում են, երբ նա սկսում է գիտելիքներ ձեռք բերել:

Ժամանակակից մտածող մարդը, հետազոտողը, շրջակա միջավայրի վերափոխողն ու մարդուն առողջություն պարգևողը պետք է միշտ հիշի Աստծո և մարդկանց նկատմամբ իր պատասխանատվությունը:

Իհարկե, համալսարանի 75 տարիների ընթացքում ձեռք բերած ակնառու հաջողություններով հանդերձ, այսօր դեռևս ունենք լուրջ թերություններ և դժվարություններ: Հազիվ թե անհրաժեշտություն կա, այսօր դրանք թվարկել: Մենք լավ գիտենք դրանց մասին և հնարավոր ամեն ինչ կանենք՝ այդ թերությունները, բացթողումները վերացնելու համար:

Մեծ ու փառավոր ուղի է անցել Երևանի պետական բժշկականը: Հպարտությամբ կարող ենք արձանագրել, որ համալսարանը հանրապետությունում բժշկական կադրերի պատրաստման պետական ակադեմիական բնույթի միակ բարձրագույն կրթօջախն է, որն իր կուռ կառույցներով մշակել ու ներդրել է ուսումնամեթոդական, գիտագործնական ծրագրեր, որոնց շնորհիվ և արժանացել է միջազգային ճանաչման: Այն, իրավամբ, դասվում է աշխարհի լավագույն բժշկական բուհերի շարքը, պատվավոր տեղ է զբաղեցնում Առողջապահության համաշխարհային կազմակերպության հաշվեցուցակում, և, որ ամենակարևորն է՝ դիպլոմը ճանաչվում է Եվրոպայի, Ասիայի, Ամերիկայի բազմաթիվ երկրներում:

Այսօր էլ համալսարանի աշխատակազմը շարունակում է մեծ հոգատարությամբ պահպանել և զարգացնել նախորդներից ժառանգած ձեռքբերումներն ու ավանդույթները: